

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ՕՏԱՐ ԼԵՂՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՋ

ABSTRACT

THE ROLE OF A FAIRY TALE IN TEACHING FOREIGN LANGUAGES

This article is dedicated to use of a fairy tale as a tool in language teaching in an attempt to demonstrate the benefits of its effective usage. As an educational tool that helps to improve the written and oral skills of the language, the fairy tale helps to develop students' imagination, memory, thinking, speech and creativity. It arouses interest and motivation in the material being studied, contributing to its assimilation and strengthening, as well as expands the worldview of the students, introduces them to the culture of the speakers of the given language.

***Key words:** fairy tale, culture, tale therapy, motivation, creativity, non-linguistic factor, worldview, language teaching, vocabulary.*

РЕЗЮМЕ

РОЛЬ СКАЗКИ В ПРЕПОДАВАНИИ ИНОСТРАННЫХ ЯЗЫКОВ

Данная статья посвящена применению технологии сказки в обучении языка в попытке показать преимущества ее эффективного использования. Будучи обучающим методом способствующим усовершенствованию письменных и устных навыков языка, сказка помогает развитию воображения, памяти, мышления, речи и творческих способностей студентов. Она пробуждает интерес и мотивацию к изучаемому материалу, способствуя ее усвоению и укреплению, а также расширению кругозора студентов, причащая их к культуре носителей языка.

Ключевые слова: сказка, культура, сказкотерапия, мотивация, творческая способность, неязыковый фактор, мировосприятие, обучение языка, лексика.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է հեքիաթի տեխնոլոգիայի կիրառմանը լեզվուսուցման մեջ՝ փորձելով ցույց տալ դրա արդյունավետ օգտագործման առավելությունները: Լինելով լեզվի գրավոր և բանավոր հմտությունների կատարելագործմանը նպաստող ուսուցողական միջոց՝ հեքիաթն օգնում է զարգացնելու ուսանողների երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, խոսքն ու ստեղծագործական կարողությունները: Այն հետաքրքրություն և մոտիվացիա է արթնացնում ուսումնասիրվող նյութի նկատմամբ՝ նպաստելով դրա յուրացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանը՝ նրանց հաղորդակից դարձնելով տվյալ լեզուն կրողների մշակույթին:

Բանալի բառեր՝ հեքիաթ, մշակույթ, հեքիաթաթերապիա, մոտիվացիա, ստեղծագործական կարողություն, արտալեզվական գործոն, աշխարհընկալում, լեզվուսուցում, բառապաշար:

Յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգությունը համամարդկային մշակութային սեփականության անքակտելի մասն է: Ամեն մի ժողովրդի մշակույթ իր զարմանալի յուրօրինակությամբ, անկրկնելիությամբ, ձևի և բովանդակության բազմազանությամբ տվյալ ազգի ակունքները և ներկան կապող օղակ է: Դա հատկապես վերաբերում է բանահյուսությանը, որի միջոցով առավել ցայտուն է արտահայտվում ժողովրդական ոգին:

Բանահյուսական ստեղծագործություններն ազգային հոգևոր արժեքի մասն են, որոնք հնարավորություն են ընձեռում ներթափանցելու նախորդ սերունդների ներաշխարհը, զգալու ազգային աշխարհընկալման և աշխարհաճանաչողության առանձնահատկությունները և ձեռք բերված արժեքները փոխանցելու սերնդեսերունդ՝ ամբողջացնելով ազգային դիմագիծը: Այս առումով հեքիաթը՝ ժողովրդական

ստեղծագործության հնագույն տեսակը, իր բազմազանությամբ և յուրօրինակությամբ ուրույն տեղ է զբաղեցնում համաշխարհային բանահյուսական մշակույթի ոլորտում՝ մշտապես գտնվելով գրական-մշակութային շրջանառության մեջ: Հատկապես ժողովրդական հեքիաթներում վառ կերպով արտահայտվում են ժողովրդի կենսափիլիսոփայությունը, դարավոր իմաստությունը, արժեհամակարգը, ձգտումներն ու պատկերացումները կյանքի, չարի և բարու, համամարդկային արժեքների վերաբերյալ:

Հեքիաթը որպես ուրույն տեքստ ոչ միայն պահպանում և սերնդեսերունդ է փոխանցում աշխարհի մասին հնագույն պատկերացումները, ազգային մտածողության արքետիպերը, այլև ազդում է ազգային մտածելակերպի ձևավորման և զարգացման վրա: Հեքիաթը համարվում է համաշխարհային գեղարվեստական մշակույթի պատմական հենքը, ժողովրդական հարուստ ավանդույթների աղբյուրը, որն առանձնանում է լեզվամշակութային մեծ ներուժով: Հ. Թումանյանի հանճարեղ խոսքով ասած. «Հեքիաթի մասին ոչ միայն մեր «երջանիկ» աշխարհում, այլ ավելի լավ երկրներում դեռ պարզ հասկացողություն չունեն: Կարծում են դա հեշտ ու հանաք բան է: Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են» (Թումանյան, 1945: 472):

Հեքիաթը լայն հնարավորություններ է ընձեռում մանկավարժական տեսանկյունից՝ հատկապես կարևոր դեր ունենալով օտար լեզուների դասավանդման մեջ:

Օտար լեզվի ուսուցման ընթացքում կիրառվում են շատ տարբեր տեխնոլոգիաներ՝ փորձելով մշակել դասավանդման նոր և արդյունավետ մեթոդներ, ձևեր և մոտեցումներ: Հաճախ օտար լեզվի դասախոսներն օգտագործում են այդ մեթոդներն ուսանողների մոտ տվյալ լեզվի նկատմամբ հետաքրքրությունը և մոտիվացիան մեծացնելու նպատակով: Ներդաշնակ և համալիր մոտեցման դեպքում խնդիրը միանգամայն հաղթահարելի է: Իհարկե, դրանց կիրառումն անպայմանորեն պահանջում է դասախոսի և ուսանողի սերտ փոխհամագործակցություն լեզվուսուցման ընթացքում դրական արդյունքի հասնելու համար:

Այդ առումով հեքիաթի տեխնոլոգիայի կիրառումն օտար լեզուների դասավանդման մեջ բավականին արդյունավետ միջոց է: Երեխաները սիրում են

հեքիաթ լսել, կարդալ, անգամ հորինել: Այն միշտ մեծ ազդեցություն է ունեցել կրթության և դաստիարակության հարցերում՝ ձևավորելով որոշակի աշխարհայացք և աշխարհըմբռնում: Հեքիաթները հարստացնում են ուսանողների գիտելիքները՝ միաժամանակ նրանց ուսուցանելով բարոյականություն և արժեքների գնահատում: Բացի այդ, լսարանում իշխում է հեքիաթային ստեղծագործական մթնոլորտ, ինչն էլ առավել հաճելի է դարձնում լեզվուսուցումը:

Ականավոր մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկին մտածելակերպի ձևավորման և համակողմանի զարգացման գործում առանձնահատուկ տեղ է հատկացնում հեքիաթին: Ըստ նրա՝ բազմամյա փորձը վկայում է, որ հեքիաթային կերպարների տպավորության ներքո երեխայի հոգում զարգացող գեղագիտական, բարոյական և մտավոր զգացմունքներն ակտիվացնում են մտքերի հոսքը, ինչը խթանում է ուղեղի գործունեությունը՝ լիարյուն թելերով կապելով մտածելակերպի կենդանի կղզյակները (Сухомлинский, 1969: 153):

Արդի մանկավարժության մեջ հեքիաթի դերն օտար լեզուների դասավանդման մեջ հատկապես արդյունավետ է լեզվուսուցման սկզբնական փուլում, երբ ուսանողի մոտ ձևավորվում է ճանաչողական հետաքրքրություն ուսուցանվող լեզվի երկրի մշակույթի հանդեպ: Միայն արտասանության, քերականության և բառապաշարի վրա հիմնվելով՝ չի կարելի խորությամբ ուսումնասիրել լեզուն: Օտար լեզվի մասնագետները պետք է զինված լինեն խոր և բազմակողմանի գիտելիքներով ուսանողների մոտ այդ երկրի մշակույթի ու սովորույթների նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջացնելու նպատակով: Այդ առումով հեքիաթը ժողովրդի մշակութային ժառանգությունն արտացոլող հարուստ աղբյուր է, որը նպաստում է ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանը՝ նրանց հաղորդակից դարձնելով տվյալ լեզուն կրողների մշակույթին: Բացի այդ, օտար լեզվի դասընթացներում հեքիաթի կիրառումը որպես ուսուցողական մեթոդ նպաստում է ուսանողների մոտ մոտիվացիայի զարգացմանը, ինչն էլ իր հերթին առաջ է բերում հետաքրքրության խորացում դասավանդվող առարկայի նկատմամբ, ինքնավստահություն սեփական ուժերի նկատմամբ և ձևավորում գիտակցված պահանջմունք գիտելիքի յուրացման գործընթացում: Ինչպես նշում է իսպանացի մեթոդաբան Ա. Սանչեսը, մեթոդն

իրականում ոչ թե նպատակ է, այլ մեր առջև դրված նպատակներին հասնելու լավագույն միջոց (Sánchez, 1992: 402):

Ուսուցման արդեն իսկ սկզբնական փուլում ուսանողների մոտ ակտիվանում են տեսողական, լսողական, խոսքային ապարատները, միաժամանակ ամրապնդվում է հիշողությունը և զարգանում երևակայությունը: Բացի այդ, տվյալ տեխնոլոգիան հնարավորություն է տալիս բացահայտելու և զարգացնելու ուսանողների ստեղծագործական կարողությունները, ներքին հնարավորությունները, մտածողությունը, խոսքը, նպաստում է գեղագիտական ընկալմանը, գեղագիտական հայացքների ձևավորմանը և այլն: Ուսանողն ակտիվ գործող անձ է աշխատանքի ողջ ընթացքում: Միմյանց հետ համագործակցելով՝ ուսանողները մտածելու, քննարկելու, իրենց հուզող հարցերի պատասխանները գտնելու, կատարելագործելու հնարավորություն են ստանում՝ դրանով իսկ իրենց ուրույն տեղն ամրապնդելով իրականության մեջ:

Ինչպես արդեն նշվել է, հեքիաթը մեծ դեր է խաղում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման գործում: Լեզվուսուցման գործընթացում հեքիաթի կիրառումը նպաստում է ստեղծագործական ինքնուրույնության ձևավորմանը: Տվյալ առարկայի շրջանակներում հնարավորություն է ընձեռվում կիրառելու ստեղծագործական առաջադրանքներ և վարժություններ, որոնք ուսանողներից պահանջում են ինքնուրույն աշխատանք: Օրինակ՝ դասախոսը ներկայացնելով հեքիաթի սկիզբը կամ կանգ առնելով որևէ հատվածի վրա՝ կարող է հանձնարարել ուսանողին շարունակել այն: Ուսանողն արտահայտում է իր տեսակետն ու մոտեցումները՝ ցուցաբերելով ակտիվ մասնակցություն՝ դրանով իսկ զարգացնելով սեփական մտքերի արտահայտման կարողությունն ու կատարելագործելով ստեղծագործական ունակությունները: Նմանատիպ աշխատանքները հնարավորություն են ընձեռում ծանոթանալ յուրաքանչյուր ուսանողի ներաշխարհին՝ գնահատելով նրա ինքնատիպությունը: Հաջորդ աշխատանքում ուսանողներին կարելի է առաջարկել խմբակային աշխատանք, այսինքն՝ շարունակել հեքիաթը խմբերով: Այս մոտեցումը ձևավորում է միասին աշխատելու, միմյանց լսելու կարողություն: Արդյունավետ ստեղծագործական առաջադրանք է նաև հեքիաթի բեմականացումը: Ուսանողները

բաժանվում են խմբերի, որոնցից յուրաքանչյուրը տալիս է հեքիաթի իր լուծումները: Շատ դեպքերում բեմականացման ժամանակ ներկայացնում են այն, ինչ իրենց ավելի է հետաքրքրել՝ շեղվելով հիմնական տեքստից:

Հեքիաթի ուսուցման մեջ կարևորվում է նաև տպավորությունն ու հուզական ազդեցությունը հասցեատիրոջ վրա, ուստի հիմնական ուշադրությունը պետք է ուղղված լինի ընթերցված նյութի նկատմամբ անձնական վերաբերմունքի ձևավորմանը: Տվյալ նպատակին հասնել հնարավոր է միայն կանոնավոր և մեթոդապես ճիշտ կազմակերպված ընթերցանությամբ: Այս առումով կարևոր է ուսանողին հանձնարարել տնային ընթերցանություն: Դասախոսը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի ընթերցանության համար նախատեսված հեքիաթների ընտրությանը և դրանց հետ աշխատելու խնդրին: Ինչպես նշում է բանագետ Ն. Վարդանյանը, ժողովրդական հեքիաթների դասավանդումը պետք է սկսել նախևառաջ դրանք հստակ տարբերակելով՝ 1.բանահյուսական ժողովրդական հեքիաթ, որը մեզ հասել է բացառապես բանավոր ճանապարհով՝ հազարամյակների ընթացքում կենցաղավարելով ժողովրդի մեջ և 2. գրական հեքիաթն իր տարատեսակներով՝ ժողովրդական հեքիաթի գրական մշակումներ և հեղինակային հեքիաթ (Վարդանյան, 2016: 219): Ուսուցման սկզբնական փուլում նախապատվությունը պետք է տրվի բանահյուսական ժողովրդական հեքիաթներին, իսկ հետագայում, երբ ուսանողներն արդեն կունենան գիտելիքների որոշակի պաշար, կարելի է օգտագործել գրական հեքիաթն իր տարատեսակներով: Հեքիաթի տեքստում ազգամշակութային տարրերի առկայությունն աշխարհի ճանաչողության գործընթացի կարևոր պայմաններից է, ինչը նպաստում է միջմշակութային երկխոսության զարգացմանը և ուսանողների մոտ օտար լեզվով ընթերցանության հանդեպ հետաքրքրության խթանմանը: Անհրաժեշտ է ձգտել, որ ուսանողները հեքիաթ ընթերցելիս մեծ բավականություն ստանան նախևառաջ լեզվական նյութը հասկանալուց, այլ ոչ թե հետաքրքրաշարժ սյուժեից: Հեքիաթի լեզվի ընկալումն ուսանողներին պետք է դրդի ընթերցելու ավելի բարդ ստեղծագործություններ: Յուրաքանչյուր հեքիաթ, որքան էլ ֆանտաստիկ բովանդակությամբ հագեցած լինի, արտացոլում է ժողովրդական կյանքի իրական պատկերը: Հենց այդ պատճառով էլ հեքիաթն այն բարեբեր գրական նյութն է, որը նպաստում է ուսանողների

հետաքրքրությունների մեծացմանն ավելի լուրջ գրական ստեղծագործությունների ուսումնասիրման համար:

Հեքիաթներ ուսումնասիրելիս ուսանողները ժողովրդախոսակցական լեզվի հետ մեկտեղ ծանոթանում և յուրացնում են հեքիաթի ուրույն լեզվին բնորոշ հատուկ բառապաշար՝ ավանդական լեզվական բանաձևեր, ոճական հնարներ և այլն: Ինչպես նկատել է ռուս նշանավոր բանագետ Վ. Պրոպան իր «Հեքիաթի մորֆոլոգիան» աշխատության մեջ, «Հեքիաթասացն ազատ է լեզվական միջոցների ընտրության հարցում: Այդ հարստագույն դաշտը ենթակա չէ մորֆոլոգիական հետազոտության: Հեքիաթի ոճը մի երևույթ է, որը պետք է արժանանա հատուկ ուսումնասիրության» (Սրոոռ, 1969: 102): Հեքիաթներն աչքի են ընկնում իրենց գրավիչ ոճով, չափազանցական պատկերներով, յուրահատուկ մակդիրներով, համեմատություններով, գունեղ անձնավորումներով, կրկնություններով: Հատկապես վերջիններիս դեպքում ուսանողը, անընդհատ հանդիպելով որոշ բառերի և արտահայտությունների կրկնությանը, մեխանիկորեն հասնում է դրանց տիրապետմանը: Հարուստ և բազմազան բառապաշարի միջոցով հեքիաթներն ընթերցողներին հաղորդում են տեղական կոլորիտի յուրահատկությունները՝ արտացոլելով ժողովուրդների սովորույթները, հավատալիքները, պատմությունը, դարավոր իմաստությունը: Այս առումով ուշագրավ է Տ. Սապատա Ռուիսի այն դիտարկումը, ըստ որի՝ հեքիաթներում գործածվող լեզվի միջոցով մտքերն արտահայտվում են առանձնահատուկ ձևով և սերմանում ընթերցողի մեջ առանձնահատուկ արձագանք: Հեքիաթում մտքերի արտահայտման ձևը ստիպում է, որ ընթերցողը կարողանա զգալ և ներգրավվել կերպարների ինքնության, պատմության սյուժեի մեջ (Ruiz, 2007: 111): Հեքիաթի տեքստում հանդիպող ոճական հնարներն ընդլայնում են ուսանողների բառապաշարը՝ առավել դյուրին դարձնելով նոր նյութի ըմբռնումն ու յուրացումը և միաժամանակ ծանոթացնում նրանց լեզվակիր ժողովրդի պատկերավոր մտածողության առանձնահատկություններին, աշխարհաճանաչողությանն ու աշխարհընկալման ինքնատիպությանը:

Առհասարակ լեզվուսուցման գործընթացի վրա մեծ ազդեցություն ունեն արտալեզվական գործոնները՝ սովորողի տարիքը, հիշողությունը, մոտիվացիան, կենտրոնացումը, մշակութային իրազեկությունը, շրջապատող միջավայրը և այլն:

Հիշողությունը լեզվի ուսումնասիրության գործում էական նշանակություն ունի: Հիշելու առաջին պայմանը ճանաչումն է: Որևէ տեղեկության կրկին առնչվելիս հեշտությամբ ճանաչում ենք այն: Երկրորդ պայմանը հիշողությամբ վերարտադրումն է, այսինքն՝ ասածը կամ լսածը ճշգրիտ կերպով վերարտադրելու կարողությունն է: Հիշելու արդյունավետությունը կախված է երկու գործոնից՝ ավելացնել նոր տեղեկություն արդեն ձևավորված գիտելիքին և այդ գիտելիքը հաճախակի կիրառելը, ինչն էլ իրականացվում է օտար լեզվի դասավանդման գործընթացում (Նիկողոսյան, Սարուխանյան, 2015: 160-161): Ինչպես գիտենք, հեքիաթի տեքստը բնութագրվում է հակիրճությամբ և լեզվի պարզությամբ, ինչն այն շատ արագ ընկալելու և մտապահելու հնարավորություն է ընձեռում, հետևաբար հեքիաթի տեխնոլոգիայի կիրառումը դասավանդման մեջ մեծապես նպաստում է օտար լեզվի առավել արագ յուրացմանը: Բացի այդ, «կրկնություն» ոճահնարի տարբեր տեսակները, ինչպես արդեն վերը նշեցինք, մեծ դեր են խաղում հեքիաթներում, որտեղ բառերի, ինչպես նաև «նույն տարրերի կամ գործողությունների բազմակի կրկնությունը հիմնական գեղարվեստական հնարն է» (Որոտ, 1976: 243), որը նույնպես օգնում է շատ արագ մտապահել և յուրացնել նոր բառապաշարը: Կրկնության տարբեր տեսակներն ապահովում են հեքիաթների ամբողջականությունը, ավարտունությունը, կապակցվածությունը, հեքիաթներին հաղորդում արտահայտչականություն, սահունություն, որոնք ստեղծում են բանահյուսական կոլորիտ, երգեցիկ ուրվագծեր, ամրապնդում և ընդգծում առանձին կերպարների փոխհարաբերությունները՝ միաձուլելով նրանց միասնական պատկերի մեջ (Арнольд, 2002: 129):

Հեքիաթը լեզվուսուցման ընթացքում ունի նաև դաստիարակչական մեծ դեր: Այն իր լավագույն կերպարների միջոցով ընթերցողին բացահայտում է աշխարհը, մարդկային հարաբերությունների էությունը, մարդկային զգացմունքների նրբերանգները՝ բարություն, հարգանք, կարեկցանք, ընկերասիրություն, արդարություն, գթասրտություն, փոխըմբռնում՝ դրանով իսկ իր մեջ կրելով հարուստ բարոյական ներուժ և բացահայտելով այն ժողովրդի մտածելակերպի որոշ գծեր, որի լեզվով ներկայացված է հեքիաթը: Բացի այդ, այն ուսանողների մոտ սերմանում է հարգանք այլ երկրի մշակույթի հանդեպ:

Հեքիաթներն արդյունավետ կարող են կիրառվել ինչպես ուսուցողական, այնպես էլ տարբեր հոգեբանական խնդիրների շտկման նպատակներով: Հեքիաթի լայն հնարավորությունները կիրառվում են նաև հոգեբանության մեջ «հեքիաթաթերապիա» անվանումով: Վերջինիս զարգացմանը մեծապես նպաստել են այնպիսի անվանի հոգեբաններ, ինչպիսիք են Բ. Բեթելիեյմը, Կ. Գ. Յունզը, Է. Ֆրոմմը, ինչպես նաև մի շարք ժամանակակից հոգեբաններ՝ Տ. Դ. Զինկևիչ-Եվստիգնեևան, Ա. Ա. Օսիպովան, Ա. Վ. Գնեզդիլովը, Ի. Վ. Վաչկովը և այլք:

Ավստրիացի նշանավոր հոգեբան Բ. Բեթելիեյմը նշում է, որ հեքիաթն ընթերցանության այլ նյութերի հետ համեմատած՝ իր խոր իմաստով լինելով ամենասրտամոտը երեխայի հոգեկան և հուզական աշխարհին՝ նպաստում է նրա զարգացմանը (Bettelheim, 1997: 9):

Ներկայումս լայն տարածում ունի հեքիաթի այն տիպաբանությունը, որն առաջարկվել է հոգեթերապևտ, հոգեբանության դոկտոր, Սանկտ Պետերբուրգի Հեքիաթաթերապիայի ինստիտուտի տնօրեն Տ.Դ. Զինկևիչ-Եվստիգնեևայի կողմից: Նա առաջարկել է հեքիաթաթերապիայի համալիր մեթոդը, որը մասնավորապես իրենից ներկայացնում է հեքիաթին առնչվող մի շարք դասընթացների կազմակերպում: Դրանք են՝

- դիդակտիկ դասընթացներ, որոնք ունեն մանկավարժական տարբեր ուղղություններ (ուսուցում, վերականգնողական աշխատանքներ, գործնական աշխատանքներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ),
- զարգացնող դասընթացներ, որոնք հասցեագրված են «նորմայում գտնվող» երեխաների ստեղծարարության, հմտությունների ձևավորման և զարգացման համար,
- շտկող դասընթացներ, որոնք ուղղված են վարքի դեստրուկտիվ ձևերն ու հուզական խանգարումներն ուղղելուն,
- հոգեթերապևտիկ դասընթացներ, որոնք կարող են նպաստել ճգնաժամային իրավիճակներում գտնվող պատանիների հետ վերականգնողական աշխատանքների արդյունավետությանը (Зинкевич-Евстигнеева, 2010):

Ա. Վ. Գնեզդիլովի կողմից հեքիաթաթերապիան սահմանվում է որպես դաստիարակության գործընթաց, հոգու զարգացում, իրադարձությունների խոր ընկալում, կյանքի օրենքների մասին գիտելիքի ձեռքբերում և ստեղծագործական կարողության սոցիալական դրսևորում (Гнездилов, 2004):

Ա. Ա. Օսիպովան իր «Ընդհանուր հոգեշտկում» աշխատության մեջ առանձնացնում է հեքիաթի հետ աշխատելու տարբեր ձևեր: Դրանք են՝ հեքիաթի կիրառումը որպես փոխաբերություն, նկարչություն հեքիաթի մոտիվներով, հեքիաթի դրվագների բեմականացում, հեքիաթի կիրառումը որպես բարոյախոսական առակ, հեքիաթի մոտիվներով ստեղծագործ աշխատանք՝ հեքիաթներ պատմելը, արտագրելը, շարադրելը թույլ են տալիս բացահայտել երևակայության ստեղծագործ էներգիան: Հեքիաթների վերլուծությունը և կերպարների վարքագծի ու գործողությունների մոտիվների քննարկումն օգնում են փոխել հայացքները կյանքի նկատմամբ, հաղորդակից լինել բարոյական արժեքներին (Осипова, 2009):

Պետք է նշել, որ օտար լեզվի ուսուցման ընթացքում հեքիաթի տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությունը կախված է դասընթացի կառուցվածքի ռացիոնալ կազմակերպումից:

Գոյություն ունեն տարբեր տեսակետներ լեզվուսուցման գործընթացում տեքստի վրա կատարվող անհրաժեշտ աշխատանքների փուլերի և դրանց արդյունավետության վերաբերյալ: Ավանդական մեթոդիկան սովորաբար առանձնացնում է ցանկացած տեքստի վրա կատարվող աշխատանքների երեք փուլ: Առաջինը մինչտեքստային փուլն է, երբ կարելի է իրականացնել հետևյալ առաջադրանքները՝ կարդալ և հիշել նոր բառապաշարը, տվյալ բառերով կազմել բառակապակցություններ և նախադասություններ, ընտրել հոմանիշներն ու հականիշները և այլն: Նման առաջադրանքները մեծապես հարստացնում են բառապաշարը: Այս փուլում սովորողի բառապաշարն ընդգրկում է բառեր, որոնք հասկանալի են, բայց ոչ կիրառելի: Այսինքն՝ այն իրենից ներկայացնում է լուռ ժամանակահատված, որի ընթացքում սովորողը չի կարող խոսել, բայց կարող է հասկանալ ասածը, այլ կերպ ասած՝ փոխել իր վարքագիծն օտար լեզվով ստացված տեղեկության արդյունքում: Հաջորդը տեքստային փուլն է, որն անմիջականորեն կապված է տեքստի ընթերցանության և թարգմանության հետ: Որպես

առաջադրանքներ կարող են լինել՝ հեքիաթի բովանդակության վերապատմում, առանձին պարբերություններով ընդհանուր հարցում, իրակությունների բացատրություն, բառապաշարի վերլուծություն (հոմանիշներ, դարձվածքներ, բարբառներ և այլն), քերականական կառուցվածքների վերլուծություն, տեքստի ոճային պատկանելիության և կառուցվածքի սահմանում և այլն: Հետտեքստային փուլն իրենից ներկայացնում է սերտաձ նյութի յուրացման աստիճանի ստուգում: Այսինքն՝ այս փուլում լեզվական կարողությունների զարգացումը կազմակերպված և նպատակային բնույթ ունի, ուստի կարելի է խոսել լեզվի յուրացման մասին:

Այսպիսով՝ դասընթացը նախընտրելի է կառուցել լեզվահամակարգային սկզբունքով, որի ընթացքում ուսումնասիրվում են լեզվի գրավոր և բանավոր խոսքի ընդհանուր նորմերը:

Համապատասխանաբար դասերի ընթացքում մեթոդապես կիրառվում են մի քանի տեսակի վարժություններ՝ լսողական, գրավոր և բանավոր: Մեր կարծիքով նպատակահարմար է կիրառել առաջադրանքների ներքոհիշյալ տեսակները. ուսանողներին ներկայացնելով հեքիաթի վերնագիրը՝ առաջարկել վերհիշել այդ հեքիաթի մոտիվներով նկարահանված մուլտֆիլմը: Այսպես օրինակ՝ մասնավորապես իսպաներենի դասաժամին նախքան իսպանական «Almendrita» (Նուշիկ) հեքիաթի ընթերցումը կարելի է կազմակերպել «Մատնաչափիկը» մուլտֆիլմի դիտումը: Տվյալ փուլում ուսանողները ծանոթանում են գործողության կատարման վայրին, տեղեկություն ստանում գլխավոր հերոսների, նրանց սոցիալական վիճակի մասին և այլն: Մուլտֆիլմի ցուցադրումը, անշուշտ, կնպաստի լսարանի կողմից հեքիաթի բովանդակության ընկալմանը: Մուլտֆիլմ դիտելիս կարելի է առաջարկել հնչյունավորել գլխավոր հերոսների գործողությունները, իսկ վերջում հարցնել հեքիաթի վերաբերյալ իրենց տպավորությունները, խնդրել, որ համեմատեն մուլտֆիլմը և հեքիաթը՝ հատկապես արտահայտչամիջոցներով հարուստ լինելու տեսանկյունից: Ուսանողներին կարելի է նաև հանձնարարել ոճահնարների միջոցով համեմատել տարբեր ժողովուրդների հեքիաթներում առկա լեզվամշակութային տարրերի ընդհանրությունները: Այս առումով կրկին անդրադառնալով իսպանական ժողովրդական հեքիաթներին՝ ուսանողները կարող են այդ հեքիաթներից հանված ոճահնարների օրինակները փորձել քննել հենց

հայկական ժողովրդական հեքիաթների հենքի վրա: Վերոնշյալի համար որպես օրինակ կարող է ծառայել իսպանական “La niña sin brazos” (Կոնստ աղջիկը) հրաշապատում հեքիաթը, որը թե՛ վերնագրով և թե՛ սյուժեով շատ նման է հայ հանճարեղ գրող Հ. Թումանյանի «Կոնստ աղջիկը» հեքիաթին: Ուսանողները բացահայտում են հեքիաթի լեզվական հարստությունը՝ առանձնացնելով և ուսումնասիրելով հեքիաթի տեքստում հանդիպող նոր բառապաշարը: Դասաժամի ընթացքում գրատախտակի օգտագործումը առավել դյուրին է դարձնում ուսանողների կողմից նյութը յուրացնելու գործընթացը: Այնուհետև կարելի է առաջարկել ուսանողներին ծավալել երկխոսություն՝ մշակելով հարցեր հեքիաթի բովանդակության վերաբերյալ, ինչպես օրինակ՝ նկարագրել գլխավոր հերոսներին՝ օգտագործելով հեքիաթում հանդիպող կայուն արտահայտություններ, մակդիրներ, համեմատություններ, չափազանցություններ, կրկնություններ, ներկայացնել որևէ հերոսի գործողությունները կոնկրետ իրավիճակում, հերոսների վարքագիծը տարիներ անց փոխված հանգամանքներում, գործողության ժամանակը, տեղը և հանգամանքը, հանձնարարել իրենց կողմից հորինել ու շարադրել հեքիաթ և այլն: Հեքիաթի բառապաշարն ամրապնդելու հնարավորություն է ընձեռում հեքիաթում իրադարձությունների հաջորդականության վերականգնմանն ուղղված վարժությունը: Ուսանողներին կարելի է ներկայացնել հեքիաթի իրադարձությունների մասին պատմող արտահայտություններ, որոնք դրված չեն հաջորդաբար: Նրանց առջև խնդիր է դրվում գրել այդ արտահայտությունները անհրաժեշտ հաջորդականությամբ: Ինչ վերաբերում է քերականության ամրապնդմանը, ապա այս դեպքում նույնպես կան տարբեր հնարներ, այսպես օրինակ՝ ներկա և անցյալ ժամանակներին վերաբերող քերականական նյութն ընդհանրացնելուց ու համակարգելուց հետո կարելի է հանձնարարել հեքիաթում ներկայացված ներկա ժամանակը դարձնել անցյալ կամ հակառակը:

Ելնելով վերոշարադրյալից՝ հանգում ենք այն եզրակացության, որ հեքիաթներն արժեքավոր աղբյուր են օտար լեզուների ուսուցման մեջ՝ իրականացնելով ինչպես կրթադաստիարակչական, այնպես էլ միջմշակութային հաղորդակցման խնդիրներ: Հեքիաթների միջոցով լեզվուսուցման գործընթացը նպաստում է ուսանողների ստեղծագործական, մտավոր և հոգևոր զարգացմանը: Եվ, ամենակարևորը,

հեքիաթներն ուսանելու մոտիվացիա են ստեղծում՝ օտար լեզվի դասաժամերը դարձնելով ավելի հետաքրքիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Թումանյան Հ.** (1945), Երկերի ժողովածու, հ. V, Նամակներ 1885-1922, Երևան, «Հայպետհրատ»:
2. **Նիկողոսյան Հ., Սարուխանյան Բ.** (2015), Մշակութային իրազեկության դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, 2 (19), Երևան, ԵՊՀ հրատ.:
3. **Վարդանյան Ն.** (2016), Ժողովրդական հեքիաթների դասավանդման մեթոդիկական բուհում, Մանկավարժական միտք, Երևան, Զանգակ:
4. **Арнольд И. В.** (2002), Стилистика: современный английский язык. Москва: Наука.
5. **Гнездилов А. В.** (2004), Авторская сказкотерапия. Дым старинного камина (сказки доктора Балы) / А. В. Гнездилов. Санкт-Петербург: Речь.
6. **Зинкевич-Евстигнеева Т. Д.** (2010), Формы и методы работы со сказками. Москва: Речь.
7. **Осипова А. А.** (2009), Общая психокоррекция. Москва: СФЕРА.
8. **Пропп В.** (1969), Морфология сказки. Москва: Наука.
9. **Пропп В.** (1976), Фольклор и действительность. Москва: Наука.
10. **Сухомлинский В. А.** (1969), Сердце отдаю детям. Киев: Радянська школа
11. **Bettelheim B.** (1997), Psicoanálisis de los cuentos de hadas. Barcelona, Crítica.
12. **Ruiz Z. T.** (2007), El cuento de hadas, el cuento maravilloso o el cuento de encantamiento. Cuenca: Ediciones de la Universidad de Castilla-La Mancha.
13. **Sánchez A. P.** (1992), Historia de la enseñanza del español como lengua extranjera. Madrid, SGEL.

Ազիզբեկյան Չարուհի - ք.գ.թ., ախստենտ, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, ռոմանական բանասիրության ամբիոն, էլ. փոստ՝ zaruhiazizbekyan@yahoo.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 23.11.20, տրվել է գրախոսության՝ 30.11.20 - 07.12.20, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 21.12.20:

